01 հուլիսի 2025թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

«Բայազ Էներգոշին» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան,

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ջրամատակարար» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Բայազ Էներգոշին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2025թ.-ի հունիսի 06-ին կնքվել է **ԱՄԱՀ-ՋՀ-ԳՀԾՁԲ-25/3** ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում Կատարողը ստանձնել է Լաբորատոր ստուգաչափումների տրամադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը:

Սակայն պայմանագրի կատարման ընթացքում հայտնի է դարձել, որ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով **ԱՄԱՀ-ՋՀ-ԳՀԾՁԲ-25/3** ծածկագրով գնման պայմանագրի 7.3 կետը՝ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ջրամատակարար» ՀՈԱԿ-ը որոշում է 2025թ.-ի հուլիսի 02-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Կատարողին տրվում է 5 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար **468000 (չորս հարյուր վաթսունութ հազար)** ՀՀ դրամի և **312000 (երեք հարյուր տասներկու հազար)** ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Պատվիրատուի բանկային հաշվին (**Արարատբանկ ԲԲԸ, Հ/Հ՝ 1510037106710100**):

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն «Բայազ Էներգոշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ջրամատակարար»

ՀՈԱԿ-ի տնօրեն **Դ. Ավետիսյան**